ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 28 2025 № 1

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ETHNOGRAPHY

ՀՏԴ՝ 94(479.25):711
DOI: 10.52971/18294316-2025.28.1-154

# 1926 Թ. ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

***Կարինե Ռ. Բազեյան***
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

**Ամփոփում**
*Նախաբան.* 1926 թ. երկրաշարժը մեծապես ազդեց Լենինական քաղաքի զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման ու նրա նոր դիմագծի ձևավորման վրա: Հոդվածում ընդհանուր գծերով ներկայացվում են 1926-1930-ական թթ. լենինականյան կյանքը, վերականգնման ուղղությամբ կատարվող աշխատանքներն ու դրանց ուղեկցող սոցիալական, մշակութային գործընթացները: *Մեթոդներ և նյութեր.* Ուսումնասիրությունն իրականացվել է պատմազգագրական և էթնոմշակութաբանական հետազոտությունների մեթոդաբանությամբ: Որպես հիմնական մեթոդ օգտագործվել են համեմատական վերլուծության տարբեր ձևերը՝ դրանք կիրառելով համակարգային մոտեցմամբ: Լայնորեն օգտագործվել է ժամանակի պարբերական մամուլը՝ որպես հավաստի սկզբնաղբյուր տեղի ունեցած պատմամշակութային գործընթացների և վերափոխումների դինամիկան ուսումնասիրելու համար: *Վերլուծություն.* Հոդվածում ներկայացված են հետերկրաշարժյան գործընթացները, քաղաքացիների վերաբերմունքը աղետի նկատմամբ, կենտրոնական և տեղական իշխանությունների գործողությունները ավերածությունների վերացման ուղղությամբ, շինարարական աշխատանքների ծավալն ու դրա ազդեցությունը քաղաքային նոր կենցաղի ձևավորման, տնտեսամշակութային, հասարակական հարաբերություններում կատարվող փոփոխությունների վրա: *Արդյունքներ* «Բանվոր» թերթի հրապարակումների ու առկա մասնագիտական գրականության համադրմամբ վեր են հանվել 1926 թ. երկրաշարժի հետևանքների վերացման գործընթացները՝ բացահայտելով դրանց ազդեցությունը քաղաքի նոր՝ սոցիալիստական դիմագծի ու լենինականյան մշակույթի ձևավորման վրա:
**Բանալի բառեր՝** *Լենինական, 1926 թ. երկրաշարժ, աղետ, վերակառուցում, շինարարություն, արդյունաբերականացում:*

**Ինչպես հղել՝** Բազեյան, *1926 թ. երկրաշարժը և արդյունաբերական Լենինականի կառուցումը,* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 1(28): 154-165 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-154

# THE 1926 EARTHQUAKE AND THE CONSTRUCTION OF INDUSTRIAL LENINAKAN

***Karine R. Bazeyan***

Shirak Center Armenological Studies of NAS, Gyumri, RA.

**Abstract**

*Introduksion:* The earthquake in 1926 had a significant impact on the development strategy of Leninakan, shaping the city's new identity. This article provides a general overview of life in Leninakan from 1926 to the 1930s, the reconstruction efforts, and the accompanying social, cultural processes. *Methods and Materials:* The study was conducted using historical-ethnographic and ethno-cultural research methodologies. Various forms of comparative analysis were applied within a systematic approach. Periodical press from that time was extensively used as a reliable primary source for studying the dynamics of historical and cultural processes and transformations. *Analysis:* The examination of materials revealed that the earthquake greatly influenced the strategic planning and redevelopment of Leninakan. The article presents the post-earthquake processes, public attitudes toward the disaster, actions taken by central and local authorities to eliminate the destruction, the scale of construction work, and its impact on the formation of a new urban lifestyle, as well as economic, cultural, and social changes. *Results:* By combining publications from the "Banvor" newspaper with existing scholarly literature, the study highlights the processes of eliminating the consequences of the 1926 earthquake and reveals their role in shaping the city's new socialist identity and Leninakan's cultural development.

**Key words:** *Leninakan, 1926 earthquake, disaster, reconstruction, construction, industrialization, workers' settlement.*

**Citation:** Bazeyan K. *The 1926 Earthquake and the Construction of Industrial Leninakan*.// "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri, 2025. V. 1(28), 154-165 pp.,
DOI: 10.52971/18294316-2025.28.1-154

***ՆԱԽԱԲԱՆ.*** 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժը Շիրակի բնակչության ու մասնավորապես՝ լենինականցիների հիշողությունից դուրս մղեց 1926 թ. հոկտեմբերի 22-ի երկրաշարժն ու դրա հետ կապված բազմաթիվ պատմությունները: Լենինականի մասին պատմող բոլոր գրքերում խոսվում է այս երկրաշարժի մասին՝ շեշտը դնելով քաղաքի վերակառուցման գործընթացի ու շինարարական աշխատանքների կազմակերպման վրա: Ավելի ուշ՝ 1988 թ. երկրաշարժից հետո ու դրա համատեքստում, հրատարակվել են երկու հոդված, որտեղ քննության են առնվել 1926 թ. երկրաշարժի ուսումնասիրության խնդիրներն [15] ու երկու երկրաշարժների հետևանքների վերացմանն ուղղված աշխատանքները [11]: Սույն հոդվածը նվիրված է երկրաշարժի՝ որպես սոցիալիստական-արդյունաբերական Լենինականի կառուցումը պայմանավորող գոր-

ծոնի դիտարկմանը, քանի որ այն փոխեց քաղաքաշինության նախկին հայեցակարգն ու ձևավորեց քաղաքի նոր ու ուրույն դիմագիծը:

1926թ. հոկտեմբերի 22-ի երկրաշարժը տեղի է ունեցել Արաքսի վտակ Ախուրյան գետի հովտում: Էպիկենտրոնը գտնվել է Լենինականից մոտ 10 կմ դեպի հարավ՝ Բայանդուր գյուղի շրջակայքում: Հաջորդ օրերին՝ ընդհուպ մինչև Նոր տարի, զգացվել են բազմաթիվ թույլ հետցնցումներ: ՀԽՍՀ տարածքում երկրաշարժից տուժել են 44 գյուղ, որոնցից 9-ը կործանվել են ամբողջությամբ: Զոհերի ընդհանուր թիվը կազմել է շուրջ 300 մարդ, մեծ մասը՝ Լենինականի շրջակա գյուղերի բնակիչներ: Քաղաքում քարե տները, հատկապես երկհարկանիները, մեծավմասամբ վնասվել են կամ փլուզվել են, իսկ միհարկանի տները կիսով չափ են վնասվել. մնացել են կանգուն հյուսիսային և հարավային պատերը: Երկրաշարժի հետևանքով զոհվել է 13 մարդ, վիրավորվել՝ 144-ը: Վնասվել կամ մասամբ փլուզվել են քաղաքի մանկաբարձական և գինեկոլոգիական հիվանդանոցի, պետական բանկի, Տիգրանյանների տան, թիվ 25 փողոցի արհմիության վարչության շենքերը, կենտրոնական հրապարակում կառուցված կոմկուսի և գործկոմի, «Հոկտեմբեր» կինոթատրոնի շենքերը, քաղաքային գերեզմանատան առանձին հուշարձաններ [15, էջեր 171-173]:

Չնայած նրան, որ քաղաքում մեծ ավերածություններ չեն եղել, սակայն երկրաշարժի հետևանքների վերացման ու վերականգնման աշխատանքները էական ազդեցություն ունեցան Լենինականի կառուցապատման հայեցակարգի մշակման ու քաղաքի նոր դիմագծի ձևավորման վրա: Հոդվածի նպատակն է հիմնական գծերով ներկայացնել այն առաջնային գործընթացները, որոնք էական նշանակություն ունեցան քաղաքի վերականգնման, կառուցապատման ու նոր մշակութային համալիրի ձևավորման գործում:

**Երկրաշարժի ընկալումն ու մեկնաբանությունները լենինականցիների մեջ**

Ինչպես բոլոր երկրաշարժերը,1926թ. երկրաշարժը ևս առաջ բերեց դրա պատճառներին ու հետևանքներին վերաբերող մի շարք բացատրություններ և կարծիքներ, որոնք պայմանավորված էին այդ ժամանակաշրջանի քաղաքական և մշակութային կյանքով:

Դեռ միջնադարյան պատմիչները, նկարագրելով Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժերը, դրանք ներկայացնում էին իբրև Աստծո պատիժ: Միջնադարի աշխարհընկալմամբ՝ երկրաշարժը «Աստվածային բարկություն է», «Աստծո պատիժ»՝ մարդկանց մեղքերի դիմաց, «վերահաս վճիռ», իսկ օրեր, շաբաթներ, անգամ ամիսներ տևած անընդհատ ցնցումների դադարումը՝ «Աստծո ողորմածություն» [19, էջ 72]:

Այս մոտեցումը, որը բնորոշ է հավատացյալ քրիստոնյաների աշխարհընկալմանը, դրսևորվել է նաև 1926 թ. երկրաշարժը վերապրածների մեջ, ինչի մասին տեղեկություններ են պահպանվել «Բանվոր» թերթում: Չնայած այն հանգամանքին, որ մամուլում հրապարակվում էին երկրաշարժի՝ որպես բնական աղետի վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ [2, էջ 2], այնուամենայնիվ, դեռ պահպանվել էին դրա քրիստոնեական հիմնավորումները: Այսպես. «Տիրացուն՝ երկրաբան» ֆելիետոնում ներկայացված է տիրացու Սիմոն բիձու բացատրությունը. «Հայր Աստվածը, երբ սկսեց ստեղծել երկինքն ու երկիրը, շինել տվեց նաև դրախտը՝ արդարների համար, իսկ դժոխքը՝ մեղավորների: Դժոխքը շինված էր այն հաշվով, որ բավականացնի բոլոր մեղավորների համար, մինչև

աշխարհի ահեղ դատաստանի օրը: Բայց անսխալ աստվածը իրա հաշիվներում մի քիչ սխալվել էր, նա չէր նախատեսել այն հանգամանքը, որ քանի գնում, այնքան մարդիկ «հետանում են» աստծու գծած ճանապարհից և նոր ճանապարհով են առաջ ընթանում, և որ կոմունիստներ էլ պիտի լինեին աշխարհում: Այսպիսով, քանի գնաց, այնքան մարդիկ ավելի հեռացան աստծու գծած «ուղիղ» ճանապարհից, և դժոխք գնալու թեկնածուների թիվը քանի գնաց՝ շատացավ, դժոխքը լցվեց, և նոր դժոխականներին այլևս հնարավորություն չկար ընդունելու, ուստի աստված որոշեց նոր դժոխք կառուցել գետնի տակ, և 1926 թ. հոկտեմբերի 22-ին այդ նոր դժոխքի հիմքը դրվեց: Հենց դրանից է, որ այդ օրը տեղի ունեցավ ուժեղ երկրաշարժ և հիմա էլ, երբ ցնցումները շարունակվում են, դժոխքի կառուցումը դեռ չի վերջացել» [4, էջ 3]:

«Բանվորի» մեկ այլ համարում ևս անդրադարձ կա երկրաշարժի պատճառների մասին, որտեղ, բացի Աստծո բարկությունից, աղետին նաև այլ մեկնաբանություններ են տրված: Նկարագրելով Շիրակի գյուղերի բնակիչների հետ հանդիպումները՝ հոդվածի հեղինակը թվարկում է նրանց հետաքրքրող հարցերն ու արտահայտած կարծիքները երկրաշարժի մասին. «-Կսեն պրոֆեսուր պիտի գա, -Կսեն Անըվա օրին պըտի ընկնինք, -Կսեն Ալագյազն է սկսե ու պտի դուս տա, -Կսեն Երևանն էլ տակն ու վրա է եղել:

Դահառլի (այժմ Գետք) գյուղում այդ խոսակցության ժամանակ մի բիձա ասում է. -Ջանըմ դարդակ բան է, ինչքան կուզես խելոք գլուխ ունեցի, գետնի տկեն ախր ինչ պտի հասկնաս օր, հեչ մե մարդմ տեյմօր հիմի դայտին բանմ չըսավ ու չի էլ կրնա ըսե, մեր խորոզները բիրադիքեն թեզ հասկընան կը, որ ժաժքը պտի եղնի, ժաժքի իրիկունը առջի իրիկվորե մեր խորոզը կանչեր կը, բռնի գլուխը կտրի:

Մի քանի բախտախնդիրներ էլ երկրաշարժը վերագրում են աստծու բարկությանը» [3, էջ 2]:

Ինչպես տեսնում ենք, երկրաշարժի պատճառների ու հետևանքների անհատական և հասարակական ընկալումները մեծ մասամբ պայմանավորված են այդ ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական մթնոլորտով, մասնավորապես՝ կրոնի դեմ պետականորեն մղվող պայքարով: Ուստի շատերը հենց անաստվածություն քարոզողներին ու Աստծու գոյությունը ժխտելն էին համարում երկրաշարժի պատճառը: Բոլոր դեպքերում աղետը ոչ միայն վախ, այլև խուճապ առաջացրեց բնակչության մեջ, որի մասին նույնիսկ երգեր հյուսվեցին:

« Ժամը օխտին ժաժքը յելավ, Գյումրին ավիրավ:
Աղաներին Բոշի սադը նես հրավիրավ:
Չբլախ-չբլախ (կնկթիք) դուս կը փախնին բաղնիքներիցը,
Կիսաթրաշ դուս կը վազզեն բառբառխանիցը:
Փախե՛ք, փախե՛ք ժաժքն է գալիս գետնի տկիցը,
Դու մի ըսե կեանքը թանգ է յամեն բանիցը:
Մեկ էլ տեսանք մեկը թռավ պատուհանիցը,
Լեղապատառ նա էլ փախավ կնկա ծոցիցը:
Հլը աշե՛ք, Գորկում կայնած է բուֆետնի շկաֆը,
Շկաֆի մեջ պպզած է մեր Վանեցյանը:

Երևանից մեկ՚մ էկավ՝ զեկուցում տալու,
Կնիկը ասավ ու յեդ փախավ՝ էդ էր մազալու:
Փախե՛ք, փախե՛ք, ժաժքն է զարկում գետնի տկիցը,
Դու մի ըսե կեանքը թանգ է յամեն բանիցը:»

«Հարուստները պոեզ նստան Թիֆլիս գնացին,
Քյասիբները պատերի տակ նստած մնացին:»[1]

«Ժաժքեն փախար, քաղքի տղա սրտիդ վախիցը,
Հըբը միշտ կսեիր. «Չեմ վախենա հեչ մի բանիցը»:
Ախր ի՞նչըդ մարդ չը վախենա էդ յանդեր ժաժքեն,
Տղամարդու պես դեմեդ չի գա, զարկե կը տկեն» [22, էջ 432]:

**Հետերկրաշարժյան իրավիճակն ու առաջին օգնության կազմակերպումը**

Աղետից հետո Լենինական ժամանեցին ԽՍՀՄ կուսակցական օրգանների աշխատակիցներ, ինչպես նաև ստեղծվեց Հայաստանի Հանրապետական արտակարգ հանձնաժողով: Սրան առընթեր գործում էր տեխնիկական հանձնաժողովը, որի գործունեությունը արծարծվում և լուսաբանվում էր հանրապետությունում հրատարակվող թերթերում, մասնավորապես «Բանվոր»-ում[14, էջ 52]:

Հանրապետական արտակարգ հանձնաժողովը լծվեց ավերված քաղաքի վերականգնման և վերաշինման հարցերի լուծմանը: Համաձայն Տեխնիկական հանձնաժողովի ներկայացրած զեկույցի՝ Լենինական քաղաքում երկրաշարժից տուժել էր 8800 տուն, որից ավերված էր 5517-ը, իսկ գավառի 44 գյուղերում տուժել էր 6018 տնտեսություն[11, էջ 165]: Թե՛ քաղաքին և թե՛ գավառին հասցվել էր հսկայական նյութական-տնտեսական վնաս: Եռանդուն աշխատանքներ էին ծավալել նաև Կարմիր Խաչը և ԱՄԵՐԿՈՄ-ը: Մասնավորապես, ըստ «Բանվորի» տվյալների, «Ամսի 6-ին քաղաքում բացվել է սննդատու կայան օրական 2000 ճաշ տալու անխնամ երեխաներին և կաթ տալու խոհանոց՝ 1000 մանուկի համար: Ամսի 7-ին 950 անապաստան երեխայի ուղարկելու է Դիլիջանի սանատորիաներ մինչև մայիս»[1, էջ 2]: Այն բնակելի շրջանները, որոնք դուրս էին մնացել այդ օգնության ցուցակներից, կառավարության որոշմամբ օգնություն էին ստանում պետական միջոցներից: Արտակարգ հանձնաժողովի որոշումներով՝ վնասված տների վերակառուցման համար բնակիչներին վարկ էր հատկացվում, իսկ անտունների համար շտապ կարգով գետնափոր տնակներ էին կառուցում: Արագ տեմպերով վերականգնվում էին նաև վնասված գործարանները, որոնք շտապ կարգով վերսկսում էին իրենց աշխատանքները[1, էջ 2]:

Վերականգնման, բնակիչների տարհանման, նրանց ունեցվածքի անձեռնմխելիության ապահովման ու առաջին օգնության գործում անգնահատելի էր տեղի բերդապահ զորքի և կարմիր բանակայինների ներդրումը: Վերջիններիս զինվորները անձնական արիության շնորհիվ թույլ չտվեցին, որ քաղաքը թալանեն, բժշկական անձնակազմը ցույց տվեց առաջին օգնությունը վիրավորներին, զինվորական խոհանոցները ուտելիքով էին ապահովում կարիքավորներին, իսկ հասարակ զինվորները պահակություն

[1] Այս երկտողը, որը բացակայում է վերևի տեքստից, հիշել է Գ. Աղանյանը: Այն երգում էին լենինականցիները, մասնավորապես՝ քաղաքային երգի կատարող Ա. Գյունաշյանը:

էին անում բնակչության տներում՝ ապահովելով ունեցվածքը, օգնում փլատակներից հանելու վիրավորներին, ոգևորում էին ծանր վիճակում գտնվող բնակչությանը՝ կասեցնելով խուճապը [2, էջեր 1,2]:

Խուճապի մանրամասն նկարագրությունը, որի ժողովրդական մեկնաբանությունը ներկայացվեց վերը, հետերկրաշարժյան տարբեր պատմությունների թվում, ևս տրված է «Բանվորում». «Երկրաշարժի հետևանքով Լենինականից փախչում էին քաղաքացիք: Գնում էին հարուստները, և այդ հարուստների հետևից գնում էին քյասիբները. թե ու՞ր էին գնում այդ քյասիբները, իրենք էլ չգիտեին: Երկրաշարժից սարսափած հեռացողները իրենց տնային իրերը հանձնում էին պահելու քաղաքում մնացող ազգականներին կամ դրացիներին, իսկ շատերը իրանց ունեցած տնային կարասիքը բազար էին հանում և ծախում շատ էժան գներով, որից օգտվողները ճարպիկ «խորամանկ» առևտրականներն էին, որ «ականջի գնով» գնում էին փախչողների տնային իրերը և ապա ծախում մեկին տասը անգամ ավել գնով: Այսպես փախեփախը շարունակվեց մեկ ու կես ամիս: Գնացողները տեղափոխվեցին Թիֆլիս, Բագու, Հյուսիսային Կովկաս՝ մինչև Ռոստով: Գրում էին իրենց բարեկամներին, որ իրանց օգնում են, ստանում են նպաստ, բնակարան, մի խոսքով շատ գոհ են իրանց դրությունից:

Իհարկե այդ բանը երկար շարունակվել չէր կարող, նրանցից շատերը վերադառնալով տեսնում են, որ կառավարության կողմից շինված են բարակներ, ուր տեղավորված են բոլոր բնակազուրկները և պաշտպանված ձմեռվա դառնաշունչ ցրտերից, մի մասն էլ ապրում է կառավարության օգնությամբ իրենց շինած բարակներում, հիմա էլ պատրաստ են վերաշինելու իրենց ավեր տները կառավարության աջակցությամբ ու երնեկ են տալիս մնացողներին: Գնացողները զղջացած են – բայց արդեն ուշ է: Խեղճերը խաբվել էին, հավատացել էին սուտ մարգարեներին, Ափեմերդիին, թե քաղաքը կկործանվի, ջրով կծածկվի, հարկավոր է ջրհեղեղից փրկվել» [6, էջ 3]:

**Վերականգնման աշխատանքների կազմակերպումը**

1927 թ. փետրվարի 22-ին ԽՍՀՄ Ժողկոմխորհը հատուկ նիստ գումարեց, որտեղ քննարկվեց Լենինականի վերականգնման, ինչպես նաև Լենինականի գավառի բնակիչներին ցույց տրվելիք օգնության հարցերը: Նիստում ընդունվեցին քաղաքի վերականգնմանն ուղղված կոնկրետ քայլերի ու միջոցառումների ծրագրեր: Ծրագրերն իրագործելու համար կազմվեց քաղաքի վերակառուցման ու ընդարձակման նախագիծ [14, 55]: Երկրաշարժից անմիջապես հետո պաշտոնապես հայտարարվեց, որ «Հին մեշչանական Ալեքպոլի փլատակների միջից պիտի ստեղծվի ուժեղ, արդյունաբերական Լենինականը: Ահա օրվա նշանախոսը: Մի միտք միայն կարող է մեզ զբաղեցնել: Չկորցնելով ոչ մի րոպե, որն անհրաժեշտ է Լենինականի վերաստեղծման համար, չկորցնել ոչ մի կոպեկ, որը կարևոր է վերաշինման գործում: Չկորցնել պաղարյունությունը և տանել պլանոմեր, ծրագրված աշխատանք, համատեղ և աննկուն[1, էջ 1]:

Ծրագրավորված վերակառուցողական աշխատանքների ու տեղական արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման և հետագա զարգացման խնդրի հետ կապված բոլոր հարցերը բազմակողմանի ուսումնասիրելու համար կազմվեց հանձնաժողով

(նախագահ՝ Հ.Մինասյան, անդամներ՝ Ս.Ստեփանյան, Դ.Չիսլին, Ս. Ալմազյան և Ա. Համբարձումյան), որը պետք է աշխատեր մինչև ապրիլի 15-ը [11, էջ 166]:

Հանրապետությունում հայտարարվեց հակասեյսմիկ կառույցների իրականացման համար նախագծերի, կոնստրուկցիաների և հաշվարկների մրցույթ: Շինարարական կոնստրուկցիաների կատարելագործման, բետոնի և երկաթբետոնի կիրառման շնորհիվ հնարավոր դարձավ կառուցել երկու հարկը գերազանցող տներ: Այդ տարիներին Հայաստանի գիտնականներն սկսեցին մշակել տուֆի կիրառման հնարավորությունները՝ պատերի շարքի, հատակների սալերի և նույնիսկ միջնորմների համար[18, էջ 23]: 1927 թ. Անդրֆեդերացիայի ժողտնտխորհի նախագահի տեղակալ Սարգիս Լուկաշինի (Սրապիոնյան) շնորհիվ Չիսլինին հանձնարարվեց նախագծել և Արթիկի տուֆից կառուցել միահարկ փորձնական-ցուցադրական տուն, որն իրականացվեց նույն տարում Լենինականում: Դա XX դարում Արթիկի տուֆից կառուցված առաջին տունն էր Հայաստանում [16, էջ 55]:

Ուշադրության կենտրոնում հայտնվեց նաև նոր քաղաքաշինական դոկտրինան՝ քաղաքի զարգացման ժամանակակից և իրատեսական առաջարկություններով: Այդ մասին «Բանվորը» գրում է. «Մշակված շինարարական լայն ծրագիրը, որ հաստատված է կենտրոնական օրգանների կողմից, հնարավորություն է տալու մեր աշխատավորությանը հին Ալեքսանդրապոլի ավերակների վրա կառուցել նոր Լենինականը» [7, էջ 2]: «Այսօր, երբ հին Գյումրիի ավերակների վրա կառուցվում է նոր Լենինականը, առաջին հերթին պետք է մտածել ջրմուղի և կոյուղու շտապ կառուցման մասին, որովհետև առանց դրան Լենինականը չի լինի քաղաք, այլ կմնա սոսկ մի մեծ գյուղ» [7, էջ 2]:

Դեռ 1922 թ. քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի որոշմամբ սկսվել էր Լենինականի փողոցների կարգավորումը, որ իրականացվում էր Ալ. Թամանյանի էսքիզային նախագծով, որը, ցավոք չի պահպանվել: 1923 թ. քաղաքի շուկայամերձ արհեստավորական շարքերի մի մասը քանդվեց, ու ստեղծվեց քաղաքի կենտրոնական հրապարակը [20, էջ 205]: 1926-1930 թթ., Լենինականի գլխավոր ճարտարապետ Դ.Չիսլնի (Չիսլյան) կազմած նոր հատակագծով,կառուցվեցին Մայիսյան ապստամբության (այժմ Վարդանանց), Լենինի (այժմ Խաղաղության օղակ) և կայարանամերձ հրապարակները՝ իրենց հարակից փողոցներով ու սեյսմակայուն տիպային երկհարկանի շենքերով («Չիսլնի տներ») [12, էջ 51]:

1930-ական թթ. պետական ճարտարապետական N3 արվեստանոցը ճարտարապետ Մ. Մազմանյանի ղեկավարությամբ կազմեց Լենինականի նոր հատակագիծը, և քաղաքի կառուցապատումը մինչև 1940-ական թթ. կատարվում էր այդ նախագծին համապատասխան: Հատակագծի գլխավոր գաղափարը խոշորացված բնակելի թաղամասերի ստեղծումն էր: Նախագծի համաձայն՝ վերջնական փուլում ենթադրվում էր կառուցել մինչև 200 000 բնակչությամբ քաղաք: Այն կազմելու պահին քաղաքի կենտրոնը, ինչպես նշվեց, հիմնականում արդեն ձևավորված էր:

1926 թ. երկրաշարժից հետո սուր դրված էր նոր պահանջներին համապատասխանող բնակելի տների կառուցման հարցը: Նպատակ էր դրված մշակել ոչ միայն սեյսմակայուն, այլև ճարտարապետական նոր հորինվածք ունեցող շենքեր: Եթե 1920-ական

թթ սկզբներին կառուցվում էին 1-2 բնակարանոց միահարկ բնակելի տներ, ապա նույն տասնամյակի վերջին նախագծվեցին նոր՝ բազմաբնակարան, երկու և ավելի հարկ ունեցող քաղաքային տիպի բնակելի տներ: Այս կարգի առաջին տները Լենինականում կառուցվեցին ճարտարապետ Չիսլևի նախագծով: Բաց աստիճանավանդակներով, սլաքաձև պատուհաններով երկհարկանի այդ տները մեծ հաջողությամբ ներգրավվեցին Ալեքսանդրապոլի պատմական միջավայր:

Բնակարանաշինությունը Լենինականում բոլորովին նոր մակարդակի հասավ տեքստիլագործների համար կառուցված բնակելի տների շնորհիվ: Խոշոր, ուղղանկյուն թաղամասերի պարագծով կառուցված եռահարկ բնակելիները, որպես նոր՝ բազմաբնակարանոց տան տիպ, զարմանալի ներդաշնակություն ստեղծեցին քաղաքի ավանդական ճարտարապետական ոճի հետ [18, էջ 24]:

Լայնածավալ շինարարությանը զուգընթաց՝ իրականացվում էին նաև փողոցների սալահատակման և մայթերի բարենորոգման աշխատանքներ, որ սկսվել էին դեռ 1929 թ.-ից: Կարևոր նշանակություն էր տրվում քաղաքի կանաչապատմանն ու այգիների, պուրակների ու զբոսավայրերի ստեղծմանը [13, էջ 23]:

Լենինականի զարգացման համար կարևոր նշանակություն ուներ արդյունաբերական ձեռնարկությունների կառուցումը: Մասնավորապես 1930 թ. շահագործման հանձնվեցին Մանվածքային և Գործվածքային ֆաբրիկաները, 1934 թ.՝ Մսի-պահածոների կոմբինատը, 1936 թ.-ին ավարտվեց հացի գործարանի կառուցումը: Այս ամենի հետ մեկտեղ վերականգնվեցին ու նորացվեցին երկաթգիծը և կայարանը, շահագործման հանձնվեց քաղաքը խմելու ջրով ապահովող նոր ջրագիծը: Հիմնվեցին նոր թաղամասեր՝ Տեքստիլ կոմբինատի, Երկաթգծի և Մսի-կոմբինատի բանավանները, որոնցում սկզբնական շրջանում կառուցվեցին փայտե կամ քարե ժամանակավոր շենքեր (բնակչության շրջանում սրանք առավել հայտնի էին «բարաքներ» անվամբ), որոնցում հիմնականում բնակեցվեցին Բանֆակերի ու Ֆաբրիկա-գործարանային ուսումնարանների /ՖԳՈԻ/ (լենինականցիների շրջանում առավել գործածական էր ռուսերեն ՖԶՍ-անվանումը) շրջանավարտները: Բանավանների բնակչության մեծ մասը Լենինականի որբանոցների սաներն ու գավառի տարբեր գյուղերից քաղաք տեղափոխված աշխատուժն էր: Յուրաքանչյուր բանավան ուներ իր կենցաղի տունը, բուժկետը, ակումբը, բաղնիքը և այլն:

1926 թ. երկրաշարժից հետո սկսեց կառուցապատվել քաղաքի հատկապես հյուսիսային հատվածը: Ինդուստրիալ կառույցները հիմնականում տեղակայվեցին քաղաքի առանձին հատվածում՝ տեղ-տեղ մոտենալով կենտրոնին, տեղ-տեղ հայտնվելով արվարձանում՝ ստեղծելով եռաշերտ հորիզոնական պատկեր. վարչական-մշակութային կենտրոն (երկու հրապարակները. մեկը՝ գաղափարախոսական. Լենինի անվան, ուր կանգնած էր նրա արձանը (այժմյան Խաղաղության օղակ), մյուսը՝ ադմինիստրատիվ-մշակութային. Մայիսյան ապստամբության՝ քաղխորհրդի շենքով, կինոթատրոնով և հյուրանոցով), որը շրջապատվում է բնակելի թաղամասերով, իսկ քաղաքի երրորդ շերտում՝ հաճախ ծայրամասերը, զբաղեցնում են արդյունաբերական արտադրամասերը [21, էջ 101]:

Խորհրդային քաղաքի ուրբանիստական նոր խոսքն էր գաղափարախոսական հրապարակի պարտադրանքը: Մինչ այդ քաղաքի հրապարակները ձևավորվել են առևտրական շարքերի շուրջ: Այստեղ էլ հայտնվում են նաև իրենց ժամանակի գաղափարախոսական կենտրոն եկեղեցիները: Խորհրդային հրապարակն ուներ լրիվ այլ գործառույթ: Եթե քրիստոնեական ծիսակարգը հիմնականում ընթանում էր շենքի ներսում, ապա խորհրդայինը՝ ի դեմս մեծ ժողովրդական տոնահանդեսների ու շքերթների, պահանջում էր ընդարձակ հրապարակներ [21, էջ 103]:

Այս առումով հարկ է նշել, որ երկրաշարժը որպես պատրվակ օգտագործվեց հունական ուղղափառ և մասամբ Հայ կաթողիկե եկեղեցիները քանդելու համար՝ դրանք համարելով խարխլված, վնասված: Մինչ այդ որոշումն ընդունելը «Բանվոր»-ում լայնածավալ հակաեկեղեցական ու հակակրոնական ագիտացիա սկսվեց: Թերթի մի քանի համարներում տպագրվեցին տարբեր ձեռնարկությունների բանվորների ու բանվորուհիների անունից կոչ-դիմումներ՝ ուղղված քաղաքի ղեկավարությանը և բնակչությանը: «Պրոլետարական Լենինականի պլանավորմանը, բնակարանային-կուլտուրական շինարարությանը խանգարող անպետք, դատարկ մնացած ու կիսախարխուլ եկեղեցիները պիտի քանդել և նրանց տեղը կառուցել գործարաններ ու կուլտուրայի տներ» ընդհանուր վերնագրի տակ հրապարակված հոդվածներից մեկում գրված է. «Այդ եկեղեցիները խանգարում են պրոլետարական Լենինականի հետագա զարգացումը: Մենք կառուցում ենք սոցիալիստական քաղաք-Լենինական: Անպետք և խարխլված եկեղեցիները, դատարկ մնացած, ժանգոտած, հնացած, տերտերների առևտրի համար ծառայող այդ որջերը պիտի մեջտեղից վերանան» [10]: Բանվորական կոլեկտիվների ժողովներում որոշումներ էին ընդունվում դիմել համապատասխան կազմակերպություններին՝ որոշ եկեղեցիներ քանդելու առաջարկությամբ: Մասնավորապես ասվում էր. «Ժողովը պահանջում է քաղխորհրդից այսպես կոչված *Սուրբ նշան* եկեղեցու տեղը կառուցել դպրոցի շենք, իջեցնել հունաց եկեղեցու գմբեթը և այն հատկացնել կարի գործարանին, իսկ փրկչի եկեղեցին վերածել շրջանային գավառագիտական թանգարանի» [9]:

Բարեբախտաբար հայկական առաքելական եկեղեցիները չքանդվեցին, քանի որ որոշվեց դրանք դարձնել թանգարաններ՝ Սբ Ամենափրկիչ եկեղեցում տեղակայվեց 1930 թ. ստեղծված Շիրակի երկրագիտական թանգարանը (ավելի ուշ՝ Ֆիլհարմոնիան), Սբ Նշանում՝ Պլանետարիումը[17, էջեր 451, 476]:

Քաղաքի նոր՝ խորհրդային դիմագիծը ձևավորվեց երկրաշարժից արդեն չորս տարի անց: 1930 թ. հոկտեմբերի 26-ի «Բանվոր» թերթի մի ամբողջ էջում տպագրված «Լենինականի պրոլետարիատը վերակառուցեց քաղաքը, նոր տեսք տվեց նրան» ընդհանուր վերնագրի տակ ներկայացված են վերոշարադրյալ բոլոր փոփոխությունները: «Քաղաքի հյուսիսում» հոդվածում նկարագրված է տեքստիլագործների թաղամասը. «Այս 4 տարիների ընթացքում հատկապես խոշոր շինարարություն է ծավալվել քաղաքի հյուսիսային մասում – տեքստիլի քաղաքամասում: …Տեքստիլի բանվորության մի մասն էլ բնակվում է ընկ. Սևոյանի անվան այգու շուրջը գտնվող շենքերում: Այս շենքերը երկրաշարժի անմիջական արդյունքն են, ծանրանիստ, խոժոռադեմ, եկեղեցական ոճի դրոշմով: Այս շենքերից մի փոքր այն կողմ-դեպի կայարանը, նախագծվում է մի նոր

և լայն փողոց, որի երկու կողմում կառուցված են երկրաշարժի բազմաթիվ շենքեր, որոնք հար և նման են ընկ. Սևոյանի անվան այգու շուրջը գտնվող շենքերին:» Այնուհետև ներկայացված է «Երկաթուղու քաղաքամասը»՝ երկաթուղայինների սպիտակ, միահարկ տներով: Մյուս հոդվածում քաղաքի միջին մասում գտնվող «Նոր բուլվար» փողոցի, նրան կից Մայիսյան ապստամբության հրապարակի ու այդտեղ կառուցված հյուրանոցի ու կառուցվելիք աշխատանքի պալատի նկարագրությունն է: Հիմնական միտքը սա է. «Վերականգնումը համեմատաբար հեշտ էր: Այն, ինչ հին էր, խարխուլ, Գյումրիական, այն, ինչ կործանվեց հիմքից, կարիք էլ չկար վերականգնելու: Գյումրիականը դատապարտված էր մահվան, երկրաշարժը միայն արագացրեց նրա մահը» [8]:

***ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.*** 1926 թ. երկրաշարժը դարձավ այն կարևոր գործոններից մեկը, ինչը պայմանավորեց Լենինականի նոր քաղաքաշինական դոկտրինան՝ քաղաքի զարգացման ժամանակակից և իրատեսական առաջարկություններով: Դրա հիմնական գաղափարն էր Ալեքսանդրապոլի՝ որպես «արհեստավորների քաղաքի» ջնջումն ու նոր՝ բանվորական և հեղափոխական Լենինականի ստեղծումը:

Լենինականի՝ որպես զարգացող արդյունաբերական ու նոր «բանվորական» մշակույթ կրող քաղաքի, վերածվելու համար կարևորվեց տնտեսական գործոնը: Ըստ այդմ էլ նորակառույց թաղամասերը ստացան համապատասխան ֆաբրիկաների կամ գործարանների անունները՝ ձևավորելով լոկալ ենթամշակույթներ:

1926-1940թթ. ընթացքում քաղաքի վերականգման համար պետության կողմից ներդրվեցին հսկայական գումարներ, որոնց շնորհիվ քաղաքը ոչ միայն վերականգնվեց, այլև ամբողջովին նորացվեց, ընդարձակվեց ու ձևափոխվեց: Լենինականը մեկ ու կես տասնամյակի ընթացքում ավանդական արհեստավորա-առևտրական քաղաքից աստիճանաբար վերածվեց ՀԽՍՀ մասշտաբներով խոշոր արդյունաբերական կենտրոնի:

**Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն**


1. «Բանվոր», 1926 թ. № 448:
2. «Բանվոր», 1926 2թ., № 449:
3. «Բանվոր», 1926 թ., № 453:
4. «Բանվոր»,1926 թ., № 456:
5. «Բանվոր», 1927 թ. № 7:
6. «Բանվոր», 1927 թ., № 29:
7. «Բանվոր», 1927թ., № 85:
8. «Բանվոր», 1930 թ. № 244,:
9. «Բանվոր», 1932 թ. № 55:
10. «Բանվոր», 1932 թ., № 59:
11. Աղանյան Ռ. 1926 թ. Լենինականի և 1988 թ. Սպիտակի երկրաշարժերի համեմատական վերլուծության փորձ,// ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», №19: 2016: 164-172 էջեր:
12. Գաբրիելյան Հ. Լենինական: Երևան, «Հայաստան» հրատ.: 1984: 129 էջ:
13. Գևորգյան Ա. Լենինականը խորհրդայնացման 15 տարում: Լենինական,1935, 32 էջ:
14. Կոզմոյան Կ. Լենինական, Եր. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1957, 180 էջ:
15. Կրբեկյան Կ., Մելիք-Ադամյան Հ. Պրոֆեսոր Պ.Ի.Լեբեդևի ավանդը 1926 թ. Լենինականի երկրաշարժի ուսումնասիրության գործում (ծննդյան 135-ամյակի կապակցությամբ), ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, Հ. 3(24: 2021 թ.: 170-176 էջեր:

16. Մելիք-Ադամյան Հ., Խաչատրյան Հ. Ճարտարապետ Դավիթ Չիսլյանի (Չիսլիեվ) ավանդը արթիկ-տուֆի օգտագործման եւ հանրահռչակման մեջ,// «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 10-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2019, 55էջ:
17. Մելիք-Սարգսյան Ա. Շիրակի պատմամշակութային հուշարձանները, Երևան: 2023: «Կոլլաժ» հրատ.: 516 էջ:
18. Միրզոյան Ա. Ալեքսանդրապոլ-Լենինական. Քաղաքաշինական դիմագիծ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, Հ.11, 2008, 17-26 էջեր:
19. Սաֆարյան Լ., Փիրուզյան Ս. Սպիտակի երկրաշարժի պատճառահետևանքային ընկալումները Հայաստանում,// Լրաբեր հասարակական գիտությունների, N: 2002 թ.: 66-77 էջեր:
20. Սեղբոսյան Կ. Արհեստավորական ավանդույթները լենինականցիների կենցաղում // «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հատոր 6: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 197: 159-252 էջեր:
21. Շագոյան Գ. «Իմ Հայաստան» ծրագրի «Մշակութային պրակտիկաների» ուսումնասիրության երկրորդ փուլի հաշվետվություն: Գյումրի, 2018, 137 էջ: https://www.academia.edu/126164248/email_work_card=title
22. Շիրակ. Հայոց բանահյուսական մշակույթը: Երևան: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024, 640 էջ:

## R e f e r e n c e s e

1 - 10 “Banvor”("*Worker"*) Daily newspaper, 1926, № 448; 2.1926 № 449; 3.1926 № 453; 4.1926 № 5; 5.1927 № 7-6; 6.1927 № 29; 7.1927 № 85; 8.1930 № 244; 9.1932 № 55; 10.1932, № 59 (in Armenien)
11. **Aghanyan T.** An Attempt at a Comparative Analysis of the 1926 Leninakan and 1988 Spitak Earthquakes, *[1926 t’. Leninakani yev 1988 t’. Spitaki yerkrasharzheri hamematakan verlutsut’yan p’vordz]* // “Scientifik works” of SCAS NAS RA, Gyumri, V. 19, 2016, 164-172 pp..(in Armenien).
12. **Gabrielyan H.** Leninakan *[Leninakan]* Yerevan, “Hayastan” pub., 1984, 129 p.(in Armenien)
13. **Gevorgyan A.** Leninakan in 15 Years of Sovietization, *[Leninakany khorhrdaynats’man 15 tarum]* Leninakan, 1935, 32 p.(in Armenien)
14. **Kozmoyan K.** Leninakan, *[Leninakan]* Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 1957, 180 p.(in Armenien)
15. **Krbekyan K., Melik-Adamyan H.** Professor P. I. Lebedev's Contribution to the Study of the 1926 Leninakan Earthquake (On the Occasion of His 135th Birth Anniversary), *[Profesor P.Lebedevi avandy 1926 t’. Leninakani yerkrasharzhi usumnasirut’yan gortsum (tsnndyan 135-amyaki kapakts’ut’yamb)]//* “Scientifik works” of SCAS NAS RA, Gyumri, N 24 (3), 2021, 170-176 pp..(in Armenien)
16. **Melik-Adamyan H., Khachatryan H.** Architect Davit Chislyan's (Chisliyev) Contribution to the Use and Popularization of Artiktuf, *[Chartarapet Davit’ Ch’islyani (Ch’isliyev) avandy art’iktufi ogtagortsman yev hanrahrrch’akman mej] //* “Cultural Heritage of Shirak: Current Issues in Armenian Studies”, 10th International Conference Proceedings, Gyumri, 2019, 55p.(in Armenien)
17. **Melik-Sargsyan A.** Historical and Cultural Monuments of Shirak, *[Shiraki patmamshakut’ayin hushardzannery]* Yerevan, “Collage” Pub., 2023, 516 p.(in Armenien)
18. **Mirzoyan A.** Alexandropol-Leninakan: Urban Development Profile, *[Alek’sandrapol-Leninakan. K’aghak’ashinakan dimagits]*“Scientifik works” of SCAS NAS RA, Gymri, 11, 2008, 17-26 pp.. (in Armenien)
19. **Safaryan L., Piruzyan S.** Causal Perceptions of the Spitak Earthquake in Armenia, *[Spitaki yerkrasherzhi patcharrahetevank’ayin ynkalumnery Hayastanum]* Bulletin of Social Sciences, N 1, 2002, 66-77 pp. (in Armenien)
20. **Seghbosyan K.** Craft Traditions in the Daily Life of Leninakan Residents, *[Arhestavorakan avanduyt’nery leninakants’ineri kents’aghum]* “Armenian Ethnography and Folklore”, Vol. 6, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, Yerevan, 1974, 159-252 pp..(in Armenien)

21. **Shagoyan G.** Report on the Second Phase of the Study of “Cultural Practices” within the “My Armenia” Program,*[“Im Hayastan” tsragri “Mshakut’ayin praktikaneri” usumnasirut’yan yerkrord p’uli hashve-tvut’yun]* https://www.academia.edu/126164248/email_work_card.Gyumri, 2018, 137 p..(in Armenien)
22. Shirak: Armenian Folklore Culture, *[Shirak. Hayots’ banahyusakan mshakuyt’y],* Yerevan, Institute of Archaeology and Ethnography of NAS RA, 2024, 640 p..(in Armenien)

Ընդունվել է / Received on: **20. 03. 2025**
Գրախոսվել է / Reviewed on: **04. 04. 2025**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Կարինե Ռազմիկի ԲԱԶԵՅԱՆ՝** պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ,
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
ավագ գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,
էլ. հասցե՝ bazeyan60@yandex.ru orcid org//0000-0002-5202-4835

**Karine Razmik BAZEYAN:** PhD in History, Docent
Senior Researcher at Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA,
e-mail:bazeyan60@yandex.ru orcid org//0000-0002-5202-4835